

ԿԱՐՍԻ ՎԻՃԱԿԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ,

(Շարունակութիւն) :

« Զի լինիցին նոքա (քարինք) ձեզ կալ ի նշանակ հանապուզորդ. զի յորժամ հարցանիցէ ցքեզ առ վաղիւ որդինքս եւ ասիցէ. զիսն են քարինքս սպորդիկ ձեզ, պատմեսցես դու որդւոյնքս » եւ ասիցես :

Յետոյ. Գլ. Դ. 6.

Ա Ն Ի.

Ա. Տեղադրութիւն լինոյ.

Անին Այրարատ նահանգի Շիրակ գաւառի մէջ է, Ախուրեան գետի աջ ափին: Անուոյ հարաւ արեւելքում երևում է վիթխարի Արագած լեռան, իսկ հիւսիս արեւմուտքից՝ Արջոյառիճ կամ Ալաջա. հիւսիս արեւելքում և հարաւ արեւմուտքում երևում են փոքրիկ անանուճ բարձրութիւններ: Անին հարաւից ունի Ախուրեան գետը, արեւմուտքից՝ Մաղկոցաձորը, իսկ արեւելքից՝ Գայլոյ կամ գլիձորը: Թէ՛ Ախուրեան, թէ՛ Մաղկոցաձորում թէ՛ Գայլոյ ձորը եղբրաւորում են քաղաքը անդնդախոր ձորերի համարեա սեպացած ժայռերով. ուստի և անմատչելի են կացնում քաղաքը, որ անպատսպար է հիւսիսային կողմից, և այս կողմից էլ կրկին պարիսպները և երբեմն ջրալից խրամատը (պարկէնքոս) անմատչելի են դարձնում քաղաքը: Պարիսպները բարձրագերձ աշտարակներով հիւսիսային կողմ պատելով և արեւելքից արեւմուտք ձգուելով մի կողմից Գլիձորի բաշով երկարելով վերջանում են Ախուրեանի ափին, իսկ միւս կողմից ծաղկոցաձորի բաշով երկարելով հասնում են արքունի ապարանքին, որ Մաղկոցաձորի վերայ է նայում: Անին իրան շրջապատող գետով և վտակներով մի թերակղզի է, որ

հարաւ արեւմուտքում բարձրանալով՝ հրուանդան է կազմում, իսկ այս հրուանդանն էլ Անույ միջնաբերդն է: Մաղկոցաձորի և Ախուրեանի մինչև մի փոքրիկ դժուարակոխ և անմատչելի բարձրութիւն կայ՝ որ այժմ Ղըզ-ղալասի է կոչւում, հաւանական է հնումն կուսանապատ լինի եղած:

Անին ըստ Ալիշանի 1500 չափ բարձրութեան վերայ է պարիզի միջօր. 41⁰—14¹ և հիւսիսային լայնութեան 40⁰—31¹ աստիճանների տակ. իսկ ըստ Կովալեւսկու և մարկուլի՝ 5000 ոտնաչափ բարձրութեան վերայ *):

Բ. Անույ հանքի յիշատակութիւն:

Շիրակայ Անին մեր պատմութեան մէջ յիշվում է Վահանեանց պատերազմների ժամանակ հինգերորդ դարում**) որպէս տեղի, ուր ուրացեալ նախարարները վախենալով Վահան Մամիկոնեանից՝ Ատրվշնասպ Մարզպանի հետ պատասպարւում են. մինչև մարզպանական Դուին քաղաք հասնելը: Այդ ժամանակ Անին եղել է մի ամրոց. Անին մինչև Ը. դարը: Բագրատունի Աշոտ մսակերը անյայտ մնալով, անցնում է Կամսարականներից Արաբացւոյ ձեռքը իսկ արաբացւոյ ձեռքից էլ Աշոտ մսակերին, որ նորոգում է. իսկ Ժ-րդ դարում 961 թուին Աշոտ Գ. ողորմած Անիում. թագաւոր օծուելով, Անին Բագրատունեաց մայրաքաղաք է դարձնում:

Գ. Անին տէրութիւն

Սկզբում Շիրակ և Արշարունիք (Արկունի և Նախիջեանի կողմունք) կամսարական նախարարութեան էին պատկանում. Արաբացիք ամբողջ Հայաստանի հետ Շիրակին էլ տիրեցին. Ը. դարում Բագրատունի Աշոտ մսակերը առաւ Անին, այնուհետև Աշոտ Գ. ողորմած. Ժրդ դարում դարձրեց Բագրատունի հարստութեան մայրաքաղաք. Այսպէս ուրեմն Շիրակի իշխան-

(*) На горахъ Араратскихъ. Москва 1889. Երես 235.

(**) На горахъ Араратскихъ Երես 234.

ներն էին 1, Կամսարականք, 2, Արաբաղիք, 3, Բագրատունիք: 81-3 տարի միայն Անին Բագրատունի թագաւորների մայրաքաղաքի պաշտօն կատարեց և այդ կարճ ժամանակում այնպէս ճոխացաւ փարթամացաւ, որ ոչ միայն սահմանակից այլ և շատ հեռաւոր երկրներում հռչակ ստացաւ: Բագրատունի հարստութեան այս կարճ ժամանակի տիրապետութիւնը յայտնի չէ ինչ միջոցով և ինչպէս Անին այնպէս բազմամարդ դարձրեց, որ յառակս էր տեսլ. «Անին շէն՝ աշխարհ աւեր. Անին աւեր՝ աշխարհ շէն, իսկ եկեղեցիների շատութիւնն և հոյակապ շինութիւնների բազմութիւնը ապշեցնում են մարդու. յառակս էր տեսլ. «Հագար և մի եկեղեցի Անւոյ»:

Անւոյ այս ճոխութիւնն ու փարթամութիւնը բնական էր որ պիտի դրդուէր հարեան ազգերի նախանձը, ուստի և, եթէ մի կողմ թուլենք Կարսի Բագրատունի հարստութեան մի ճիւղի ոտնձգութիւնները, առաջին նախանձորդ հանդիսացան յոյները, որ տեսնելով թէ զէնքով չեն կարողանում նուաճել Անին, իրանց յատուկ խարդախութեամբ 1042—4 թուերին Անւոյ Գագիկ Գ. թագաւորին խաբելով Կ. Պօլիս տարան և այսպէս տիրաննեգ հայ իշխանների և յատկապէս լեւոտ Սարգսի ձեռնտուութեամբ տիրեցին Անիին: Յոյները երկար չըկարողացան տիրել Անիին. նոցա տիրապետութիւնը միայն 21 տարի տեւեց, և կառավարում էին երկիրը իրանց կուսակալների ձեռքով՝ որ կայսեր տեղակալ էր կոչւում (կատապան): 1064 թուին Արփ—Արսլան Սկիւթացի սելճուք զօրքերով յոյներից առաւ Անին մեծամեծ կոտորածներով ու աւերմունքներով: 1072 թուին Դուհայ ոստիկանը Ապուլստար կամ Շառւր Արփ—Ասլանից Անին գնեց և յանձնեց իւր մանկահասակ Մանուչէ որդուն: Մանուչէ և իւր որդիք Մանուչեան կամ Շէտատեան կոչմամբ ասիւս տիրողսով 127 տարու չափ տիրեցին Անիին, և գտնվում էին Պարսից կամ Արաբացւոյ բարձրագոյն իշխանութեան տակ:

Շէտատեանց օրով Անին դարձեալ բարգաւաճ դրութեան մէջ էր. որովհետեւ Մանուչէ մօր կողմից Բագրատունեաց թուռն

լինելով և Բագրատունի կին առնելով՝ իբրև կէս հայ հայոց խնամքով էր կառավարում: Շէտառեանց վերջին իշխանը Քէյ — Սուլթան էր կոչվում (1198 թ):

Զաքարիա սպասալարը 1199 թուին Քէյ — Սուլթանից Անին առաւ և որդւոյ որդի ժառանգեց մինչև 1312 թիւը: Զաքարեանք տիրում էին Անիին Պարսից բարձրագոյն իշխանութեան տակ և որովհետև Զաքարեանց իշխանութեան կենդրոնը Լոռին էր, ուստի և Անին կառավարում էին իրանցից նշանակուած մի իշխանի ձեռքով որ Պարսին էր կոչվում:

Անիին վերջնական հարուածը 1386 թուին տուեց Լէնկ — Թէմուր, իսկ բոլորովին ամայանալու պատճառներն եղան երկրաշարժը, սուլը, ասպատակութիւնները և սրածութիւնը: Անւոյ գաղթականները աշխարհի ամեն կողմ օկուուեցին և շէնցրին իրանց գաղթավայրերը, արգարացնելով առածը «Անին աւեր՝ աշխարհ շէն»: Վրաստանի, Աստրախանի, Խրիմի, Լեհաստանի և այլն հայերը Անւոյ գաղթականք են համարվում:

Խնչպէս Անւոյ սկզբնաւորութիւնը, նոյնպէս և վերջնական ամայութիւնը անյոյտութեան մէջ է: Անին դարերով երբեմն Պարսից և երբեմն Տաճկաց իշխանութեան տակ էր, ոչ այնքան ժամանակը, սրբան մարդոց շահասէր և աւերիչ ձեռքերն Անւոյ աւերակների սպառման միջոց էին հանդիսացել, քանդելով քարերը և վաճառելով: 1877 թուից սկսեալ ռուսներն առնելով Անին Տաճիկներից արգելք դրին այդ նուաշտացուցիչ վաճառականութեան: Անիում, ուր միայն տաս և երեք տարի առաջ աւազակներ էին բնակում և քրդերն ու թուրքերը քարերը քանդելով ի վաճառ էին հանում Կարս և այլ տեղեր, այժմ շնորհիւ ռուս բարեկարգ տերութեան հայ վարդապետ է բնակում և մօտ հինգ հարիւր տարի լռած աստուածային ալեւուսն նորից հնչեցնում է Աստուծոյ տաճարի կամարների տակ: Այն տեղ, ուր աւազակների երկիւղից ոչ ոք չէր համարձակում ոտը կոխել, եթէ չուներ հետը բազմութիւն և պահապաններ, այժմ խաղաղ երկրագործն ու խաշնարածն իրանց հօլուական և մշակական երգերն հնչեցնելով հանգիստ օր են

անցկացնում. և ճանապարհորդը կամ այցելուն պատասխար-
ուելով հայ վարդապետի յարկի տակ՝ աներկիւղ շրջում է ա-
ւերակների մէջ:

— Բագրատունի հարստութիւնից յետոյ Անիին տիրեցին. Ա,
Յոյները 1042—1064 թ. Բ, Ալփ—Արսլան 1064—1072. Գ, Մա-
նուչեանը կամ Շէտատեանը 1072—1199. Դ, Զաքարեանը
1199—1342 Ե, Լէնկ-թէմուր, հորեմն պարսիկներ, Տաճիկներ
1342—1877. և Զ, Ռուսը 1877-վինչև այսօր:

ԱՆԻՈՅ ՆՇԱՆԱՒՈՐ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա. Պալատ.

Ներքին կամ փոքր պարիսպը բրգերն ու մի քանի եկեղեցի-
ներ շինեց Աշոտ Գ. ողորմած 964 թուին: Աշոտի որդին և յա-
ջորդը Սմբատ Տիեզերակալ շինեց արտաքին պարիսպը և խա-
մաւը (պարկէնիփոսը) Մազկոցաձորից մինչև Գլիձոր:

1064 թուին Արփ-Արսլան պաշարելով Անին՝ քանգեց պա-
րիսպները և ներս խուժեց: Երբ Շէտատեանը կամ Մանու-
չարեանը տիրեցին Անին, սկսեցին քայքայուած պարիսպները
նորոգել. պարիսպների նորոգութիւնը շարունակուել է և Զա-
քարեանց օրով և մեծ նորոգութիւնը տեղի է ունենում Զա-
քարէ սպասալարի օրով 1208 թուին, և Մխիթարիչ Գանձակեցու
ձեռքով՝ որ Զաքարէի դորձակալն էր, 1215 թուին, Անւոյ պա-
րիսպների նորոգութիւնը տեղի է ունեցել մինչև ԺԴ-րդ դարը:

Բ. Անւոյ դռները.

Անւոյ արտաքին պարսպի վերայ երկու դրան տեղ է նկատե-
լի, իսկ ներքին պարիսպը ունի հինգ դուռն. ներքին պարսպի
դռներն են — Աւագ դուռն, Գլիձորի դուռն, Մազկոցաձորի
դուռն, Դռներից հիւսիսային կողմինը՝ Կարուց (Կարսի) դուռն
իսկ արեւելակողմինը՝ Երեւանայ (Դուռնայ) դուռն են կոչուել
հաւանականաբար:

Գ. Կատարելներ

Ախուրեան գետի վերայ Անին ունեցիլ է մի քանի կամուրջներ, որոնցից երկուսի հետքերն են երևում այժմ. մինը կաթուղիկէից դէպ ի հարաւ, իսկ միւսը՝ Ղըղ-Ղալասու մօտ: Անւոյ գետեղմանոցը եղել է Ախուրեանի միւս ափին:

Դ. Ապարանի խառնարան

Հիւսիսային դրան (Կարդւոյ դուռն) և Մաղկոցաձորի անկիւնում, գտնվում է մի մեծ շինութեան աւերակ գեղեցիկ դըրուազներով և քանդակներով: Այս աւերակը համարվում է Թագաւորաց ապարանքը: Ապարանքը բաղմասնեակ և բաղմասրը մի շինութիւն է եղել, ներքնատներով և նկուղներով: Սենեակները համաչափութիւն չունին: Ամբողջ շինութիւնը կառուցուած է Մաղկոցաձորի ձորաբաշին, մուտքը քաղաքի կողմից է իսկ լուսամուտները բացվում են դէպ ի Մաղկոցաձոր, որ գեղեցիկ տեսարան է պատկերացնում: Մուտքի ճակատը զարդարուած է իւսանիշ գեղեցիկ մոզայիքով, որ դժբաղդաբար այցելուները քանդում են Անուց հետները յիշատակ տանելու համար: Շինութեան մի մասը արդէն բոլորովին փուլ եկած է, ձորի վերայի պարիսպն էլ վտանգաւոր կերպով ճեղքուած և բաժանուած է բուն շէնքից և շուտով փուլ կը գայ, իւր բեկորներով լցնելու Մաղկոցաձորի գեղեցիկ մարգագետինը, մի քանի շերտ Թանձրութեամբ ևս ծածկելով այն հնութիւնները, որ արդէն ծածկուած են նոյնպիսի փլատակների տակ:

Ե. Ապարանի և Մ. Գրիգորի եկեղեցի

Այս փոքրիկ եկեղեցին կոնգուէն կոյ ապարանքից դէպ ի հարաւ Մաղկոցաձորին մօտ փոքրիկ բարձրաւանդակի վերայ վեց կիսաբոլորշի և 12 անկիւն ունի. շինուած է Ժ. րդ դարու վերջին քառորդից առաջ. վասն զի ՆԽԴ. Հայոց Թուակառնին արդէն Ապուղամրի որդի Գրիգորի կինը Շուշանը կրպակներ է նուիրում այս եկեղեցուն: Այս եկեղեցին որ Ապուղամրինց է

կոչվում, շինուած է նոյն ինքն Ապուղամրի հայր Վահրամ իշխանաց իշխանից առաջ, որովհետեւ Վահրամ իշխանաց իշխանը իւր որդի Ապուղամրի համար ի հոգեբաժին՝ կրպակներ է նուիրում Ս. Գրիգորի եկեղեցուն։ Եկեղեցին ճոխացած է եղել, ինչպէս արձանագրութիւններն են ցոյց տալիս՝ Ապուղամրեանց նուէրներով, և, երևի հէնց այս պատճառով էլ Ապուղամրեանց է կոչուել։ Շինութեան թուականը յայտնի չէ։

2. Առաջին եկեղեցի.

Ապուղամրեանց եկեղեցու և ապարանքի միջև, փոքր ինչ դէպի արևելք գտնվում է Առաքելոց եկեղեցու աւերակները. որի միայն ժամատունը կիսով չափ կանգուն կայ, իսկ տաճարները ներկայացնում են համարիա միայն քարերի դերքուկներ։

Առաքելոց եկեղեցու այս ժամատունը Անույ ամենաճարտարաշէն և հոյակապ շինութիւններից առաջինն է. դռանչելի քանդակներ և նուրբ դրուագներ ունի։ Միակ ժամատունը ունեցել է կից երեք տաճար. մէկը դէպ ի արևելք իսկ երկուքը դէպ ի հիւսիս։ Տաճարները այնքան քայքայուած են, որ դժուար է կարծել թէ կապ են ունեցել ժամատան հետ, այս պատճառով էլ ոմանք այս ժամատունը կամ գաւիթը համարում են գրատուն, մատենադարան, դահլիճ աւագանւոյ ևլն։ Այս ժամատան գեղեցիկ շինութիւնը տեսնելու համար միայն արժէ գնալ Անի։ Այս շինութեան կից տաճարի վերայ Հ. Սարգսեանի նկատած ամենահին արձանագրութիւնը Հայոց ՆՁ. թուականին (Փրկչի 1032) է, որով Վահրամ իշխանաց իշխանի որդի Աբուղամր իւր եղբոր (ուրիշ տեղ որդու) Գրիգորի արեւշատութեան համար յիշատակիք է տալիս, իսկ նորը՝ Հայոց 271 (Փրկչի 1249) թուին է։ Այսպէս ուրեմն Առաքելոց եկեղեցու շինութիւնը աւելի հին է քան փրկչի հաղարամեակը, իսկ շինութեան թիւը յայտնի չէ, որովհետեւ շինութեան արձանագրութիւնը չըկայ։

Ժամատները, որքան ես հետեւել եմ, Հայոց Ո. թուականից կամ Փրկչի հաղարամեակից առաջ չեն եղել. ուստի և պէտք

է նկատել որ այժմ քանդուած տաճարներին իբրև յաւելուած է շինուել Առաքելոցի ժամատունը, և այս հէնց այժմ էլ նկատելի է: Հ. Սարգսեան այս ժամատունը համարում է տաճար, և զարմանում է որ սեղանի տեղ չըկոյ:

Է. ՄԵՆՆԻՐԻՆ:

Պարսպից ներս մտնելով դէպ ի կաթուղիկէն գնալիս՝ ճանապարհի աջ կողմը կար մի մինարէթ որ 1881 թուին կործանուեց, սակայն բեկորները շերտ շերտ դեռ կան: Այս մինարէթը թէև ոմանք ակորոժում են դիտանոց անուանել, սակայն այնպէս չէ, այլ եղել է Էպ-Իւլ - Մամրանայ մզկիթի մինարէթը, որ շինուել է Շէտատեանց օրով: Այս մինարէթը ունէր պարսկերէն արձանագրութիւն Շէտատեանց վերջին Քէյ-սուլթանի անունով 1198—9 թուին, որ թուին Զաքարիա առնելով Անին՝ վերջ տուեց Շէտատեանց իշխանութեան:

Ը. ԿՆՆՆԻՐԻՆ:

Կաթուղիկէ Անուոյ հոյակապ, մեծ և փառաւոր եկեղեցին շինուած է յանուն Ս. Աստուածածնի գմբէթը խոնարհել է 1830—40 թուերին: Գմբէթը ունեցել է մարդաչափ բարձրութեամբ արծաթեայ խաչ, որ Արփ-Արսլան վար է իջեցնում և գրաւում տեղը դնելով մահմետական ոսկեզօծ կիսալուսին (մանիկ): Գմբէթի միջից քաշ էր արած մի բիւրեղեայ ջահ որ տասն երկու լիտր է կշռելիս եղել և նոյնքան էլ ձէթ տանելիս:

Այս տաճարը 980 թուին հիմնարկել է Սմբատ Բագրատունի թագաւորը և աւարտել է Կադրանիդէ թագուհին, որ Սմբատի յաջորդ Դագկի կինն էր, 1001 թուին. եկեղեցին կառուցել է նոյն ժամանակի հռչակաւոր Տրդատ ճարտարապետը: Տաճարի շինութիւնը շաւիղի է տեղի:

Այս տաճարի արևմտեան կողմն է շինած Անուոյ վանահօր բնակարանը. ուր պառսպարվում են այցելուք: Տաճարը կանգուն է, բայց հիւսիսային պատը փոքր տեղ քանդուած է և ինչպէս ասացի՝ գմբէթը խոնարհած: Վանահայրը թեթև նորոգութիւն է արել բեմը շինելով և հիւսիսային ու հարաւային դռները շարելով:

Թ. Մարտի 10. 1911 թ.

Այս փոքրիկ եկեղեցին գտնվում է Կաթողիկէի արևելեան հարաւային կողմ, շինել է Սարգիս Կաթողիկոս ԺԱ. դարում:

Ժ. Ս. 1-րդ դար:

Անւոյ հնութիւններէց ժամանակի և մարդկանց աւերմունքին դիմացել է այս եկեղեցին, ժամանակին դիմացել է, որովհետեւ համարեա բոլոր շինութիւններէց կրտսերն է ժամանակով, մարդոց դիմացել է, վասն զի Ախուրեանի զառ ի վայրի վերայ լինելով դժուարակոխ տեղ է, և դիւրին չէ քանդած քարերը փոխադրել: Այս եկեղեցին կոչւում է այլազգական բառով՝ Նախշըրը. որովհետեւ ամբողջ եկեղեցու մէջ որմնիւրի վերայ նկարներ են յունական ճաշակով և յունական վերտառութիւններով: Եկեղեցին Աստուածածնի անուամբ շինուել է 1215 թուին, և շինողն է Զաքարիա սպասալարի պաշտօնեայ Տիգրան Սմբատեանց Հոնեանց, եկեղեցին ժամատուն է ունեցել, բայց այժմ կիսով չափ քանդուած է: Եկեղեցու յունական պատկերներն ու յունարէն մակերնները ոմանց կարծել են տուել որ դա յունական եկեղեցի լինի եղած, սակայն արձանագիրը բոլորովին հերքում է այս կարծիքը, և նայն ինքն եկեղեցուն հիմնարկող Տիգրան Հոնեանց եկեղեցին ծաղկազարդող յոյներին պատկերադործ խաչէր է կոչում: Որովհետեւ, ինչպէս ասացինք միայն այս եկեղեցին է որ քիչ շատ անարատ է մնացել, ուստի և աստուածային պաշտամունքն ու Ս. պատարագը այստեղ է կատարւում: Եկեղեցու շինութիւնից համարեա մի դար յետոյ (1310-ին) Զաքարիայի յաջորդներից Շահնշահի օրով նորա պաշտօնեայ Մաթէ անուն մէկը նորոգութիւններ է անում եկեղեցու վերայ, ինչպէս ցոյց է տալիս եկեղեցու արեւելակողմի արձանագրութիւնը: Այս եկեղեցին Կաթողիկէից դէպ ի արեւելք է գտնւում, բաւական հեռաւորութեամբ:

(Շարունակել)

ՅՈՒՄԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՎՍԵՍԵԱՆ.